



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Խնդիրը մերն է, դրա լուծումը՝ նույնպես

Վերջին օրերին Ադրբեջանը, ինչպես միշտ, շարունակում է սահմանային լարվածություն հրահրողի իր անփոփոխ քաղաքականությունը: Սա հակառակորդի համար արդեն դարձել է վարքագիծ, որին քաջատեղյակ է ոչ միայն սահմանին կանգնած զինվորը, այլև Արցախի յուրաքանչյուր բնակիչ: Սա, սակայն, ոչ թե պետք է դառնա սովորական, առօրյա երեւոյթ, այլ պետք է մղի հակազդեցության, որովհետև հակառակորդը լուրջ է այն ժամանակ, երբ գիտի, որ գործ ունի իրեն պարտության մղած ու հաղթանակ արձանագրած երկրի հետ, գիտի, որ դու կարող ես նրան պատասխանել իր իսկ լեզվով, որ սահմանից այն կողմ ապրողներն ապրում են հաղթողի հոգեբանությամբ, ու չես կարող նրան մղել խուճապի ու տատանման:

Ապացուցված իրողություն է, որ պարտվում ես այն ժամանակ, երբ տրամադրված ես լինում պարտության, իսկ Արցախում տեղի ունեցող վերջին իրադարձություններն ապացուցում են, որ արցախցին տեր է իր հաղթանակին, ու նրան չես կարող պարտություն պարտադրել:

Օրեր առաջ Ստեփանակերտում մեծ շուքով նշվեց Բերքի տոնը, որին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև սահմանամերձ գյուղերի բնակիչները՝ հանդես գալով իրենց ձեռքով մշակած բերք ու բարիքով: Սա ես ապացույցն է վերոնշյալ իրողության, եւ ընդհանրապես՝ Արցախում ամեն ոք զբաղված է իր գործով: Ավելին՝, հյուրերի հոսքն Արցախ երբեք չի դադարում, ովքեր գալիս են ամենատարբեր նպատակներով, պաշտոնական ու ոչ պաշտոնական այցելու՝ ոչ միայն ճանաչելու Արցախը, այլև իրենց ներդրումն ունենալու արցախաշինության, ասել է թե՛ հաղթանակի ամրապնդման գործում:

Նախօրեին աշխարհի տարբեր երկրներից շուրջ 100 ՀՕՍ-ուհիների՝ Արցախ կատարած այցը եւ համահայկական այդ կառույցի՝ Արցախյան շարժման ու պատերազմի տարիներից ի վեր գալիս ներդրումն ու նվիրումն Արցախի եւ հատկապես Արցախի մանուկների անհոգ ու արժանապատիվ մանկության պահովման գործում նշվածի վառ օրինակն է: Առհասարակ, սա եզակի օրինակ չէ: Արցախի Հանրապետության ծնունդից առ այսօր համայն հայությունն Արցախի կողքին է եւ Արցախում: Հիրավի, Արցախը համայն հայության տունն է եւ համազգային հպարտություն:

Եթե Արցախյան շարժման ու պատերազմի տարիներին ժողովրդի մոտ մեծամասամբ լավատեսական տրամադրություն էր իշխում, ապա այսօր յուրաքանչյուր արցախցի իրատեսորեն է գնահատում դեպքերն ու իրավիճակը, անում սթափ հետեւություններ: Նա գիտի, որ արդեւանցին նույն ադրբեջանցին է՝ նորոյա, «քաղաքակիրթ» ձեւացողի դիմակով, ռուսները նույն «բարեկամ» ժողովուրդն են՝ խորհրդային բանակի ձեռքով հայկական բնակավայրերի հայաթափման գործողություններ իրականացնող ու հակառակորդին զինող իրենց անփոփոխ քաղաքականությամբ, եւ ընդհանրապես՝ ոչ ոք չի փոխվել. փոխվել են միայն քաղաքական խաղերի մարտավարությունները: Այս ամենի կողքին նույնն են մնացել մեր մարտահրավերները եւ դրանց դիմակայելու ներքին միասնության ու միասնական ուժի գիտակցությունը:

Այս գիտակցումով պետք է աշխատել եւ արարել ամեն օր: Որեւէ մեկին որեւէ բան ապացուցելու կարիք չկա: Հզոր եւ զարգացած Արցախը յուրաքանչյուր հայի երազանքն է եւ հակառակորդի դեմ մեր ամենաիրական պատասխանը: Համամարդկային աքսիոմն Արցախում այլեւս կիրառված է: Խնդիրը մերն է, դրա լուծումը՝ նույնպես:



100-ից ավելի ՀՕՍ-ուհիներ այցելել են Արցախ

Հոկտեմբերի 4-9-ը Երեւանում տեղի է ունեցել Հայ օգնության միության (ՀՕՍ) 71-րդ համահայկական պատգամավորական ժողովը, որին մասնակցում էին կառույցի 25 երկրներից ընտրված պատգամավորներ, ինչպես նաև հյուրեր, դիտորդներ:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը նպաստելու եւ Հայ օգնության միությունում երկարամյա ազգանվեր գործունեության համար ՀՀ սփյուռքի նախարարը ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության նախկին ատենապետուհի Վիկի Մարաշյանին պարգևատրել է նախարարության պատվոգրով, ՀՀ սփյուռքի նախարարության եւ Հայ օգնության միության (ՀՕՍ) միջև կնքվել է համագործակցության հուշագիր: ՀՕՍ-ի Կենտրոնական վարչությունն իր «Արարատ» մրցանակը շնորհել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Եվրամիություն-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Էլենի Թեոխարուսին՝ Արցախի հերոսամարտի տարիներին իր մարդասիրական եւ բժշկական օժանդակության, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանում Հայաստանին հուզող հարցերի բարձրացման, Արցախի ժողովրդի

արդար պահանջները եվրոպական առյուծախնամ ներկայացնելու եւ պաշտպանելու համար:

Հոկտեմբերի 9-ին ՀՕՍ-ի 71-րդ պատգամավորական ժողովն ընտրել է համահայկական կառույցի ղեկավար մարմինը՝ Կենտրոնական վարչության նոր կազմը, որը բաղկացած է լինելու հետեւյալ անդամներից՝ Զարուհի Շամադոյան (ատենապետ), Նարինե Ստրատյան (փոխատենապետ), Ռիթա Գոյունյան (ատենադպիր), Սիլվա Գոյունյան (գանձապահ), Սոնիա Աբելյան, Լիզա Ավագյան, Ալեսյա Բեջանյան, Մարալ Մաթոսյան, Աննա Տեր Հակոբյան, Նելլի Վեգիյան եւ Վարսենիկ Սարգիսյան:

Հոկտեմբերի 10-ին ՀՕՍ-ուհիներն այցելել են Արցախ եւ ներկա եղել Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի նոր շենքի հիմնարկների արարողությանը, մասնակցել ՀՕՍ-ի Արցախի միավորի նախաձեռնությամբ կազմակերպված պաշտոնական ճաշկերույթին, այցելել Ստեփանակերտի Հուշահամալիր, Արցախի պատմա-մշակութային վայրեր, Արցախի «Սոսե» մանկապարտեզներ:

Հոկտեմբերի 13-ին Հայ օգնության

միության Կենտրոնական վարչության նախկին ատենապետուհի Վիկի Մարաշյանը, նորընտիր ատենապետուհի Զարուհի Շամադոյանը, ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության կողմից Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շինարարության համար կյանքի կոչված դրամահավաք հանձնախմբի անդամներ Հուրի Նաջարյանը եւ Անժել Մանուկյանը այցելել են Ստեփանակերտի ՀՅԳ գրասենյակ:

Երանյե հանդիպում են ունեցել Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանի, ԼՂՀ փոխվարչապետ, ՀՅԳ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանի, ՀՅԳ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանի, ՀՅԳ Արցախի ԿԿ անդամ, «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Արմեն Սարգսյանի եւ ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Լեռնիկ Հովհաննիսյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՅԳ քույր կառույցի՝ ՀՕՍ-ի հետ փոխհամագործակցության, առաջիկա աշխատանքներին ու ծրագրերին վերաբերող հարցեր:

Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շինարարության նպատակով հավաքվել է 647.000 ԱՄՆ դոլար



Հոկտեմբերի 11-ին Արցախի թեմի առաջնորդ Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի նոր շենքի հիմնարկների արարողությունը:

Կարդացեք 2-րդ էջում

Իրավական տեսանկյունից Վիլսոնի իրավաբար վճիռը ուժի մեջ է. Արա Պապյան



1920 թ. նոյեմբերի 22-ին Վուլո-րո Վիլսոնը կայացրել է իր իրավաբար վճիռը եւ դեկտեմբերի 6-ին պաշտոնապես փոխանցել է Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն մարմնին: Այդ վճիռը պաշտոնական եւ ամբողջական անվանումն է...

Կարդացեք 3-րդ էջում

ԼՂՅ նախագահը պարգևատրել է ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության նախկին ատենապետուհի Վ.Մարաշյանին

ԼՂՅ նախագահ Բակո Սահակյանը հոկտեմբերի 12-ին հանդիպում է ունեցել Հայ օգնության միության (ՀՕՍ) 71-րդ համահայկական պատգամավորական ժողովի անդամների հետ՝ նորընտիր ատենապետուհի Զարուին Շամավոնյանի գլխավորությամբ:

Հանդիպմանը ներկա են եղել ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՅ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ՀՀ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՅ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը, ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավորները, ՀՕՍ-ի Արցախի մասնաճյուղի անդամները:

Երկրի ղեկավարը բարձր է գնահատել ՀՕՍ-ի ղեկավարությունը համահայկական տարբեր ծրագրերի իրականացման եւ Արցախին ցուցաբերվող մշտական աջակցության գործում:

Բակո Սահակյանը երախտագիտություն է հայտնել Հայ օգնության միու-

թյան Կենտրոնական վարչության նախկին ատենապետուհի Վիկի Մարաշյանին:



նին եւ Արցախի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրել նրան «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

«Հայ օգնության միության հիմնադրումն է հայրենիքը, Հայաստան-Արցախ-

տերազմի հերոսական օրերին՝ թիկունք կանգնելու հայ զինվորին, հայ մայրերին ու հայ մանուկներին: Պատերազմից հետո էլ Հայ օգնության միությունը շարունակել է իր առաքելությունն Արցախում՝ մաս կազմելով Արցախի շենացման ու զարգացման ծրագրերին: Բացի մանկապարտեզների ծրագրից, նախորդ տարիներին ՀՕՍ-ն իրականացրել է նաեւ 3000 որբերի, ավելի քան 350 որբ ուսանողների, ինչպես նաեւ լավագույն ուսանողներին օժանդակելու ծրագրեր»,- նշել է Հայ օգնության միության Կենտրոնական վարչության նորընտիր ատենապետուհին:

Նախագահը հաջողություններ է մաղթել նորընտիր ատենապետուհի Զարուին Շամավոնյանին նրա պատասխանատու աշխատանքում:

Նախագահ Սահակյանը նաեւ պատասխանել է ներկաների կողմից բարձրացված տարաբնույթ հարցերին:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շինարարության նպատակով հավաքվել է 647.000 ԱՄՆ դոլար



Հոկտեմբերի 11-ին Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի նոր շենքի հիմնարկեքի արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ԼՂՅ ԱԺ փոխնախագահ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանը, ԼՂՅ փոխվարչապետ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանը, ԼՂՅ կրթության, գիտության եւ սպորտի նախարար Սլավա Ասրյանը, ԼՂՅ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանը, պաշտոնատար այլ անձինք, աշխարհի տարբեր երկրներից Արցախ ժամանած ՀՕՍ-ուհիներ:

ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության նախկին ատենապետ Վիկի Մարաշյանին իր խոսքում նշեց, որ Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզն առաջին մանկապարտեզն էր, որը 1998-ին հիմնվել է Հայ օգնության միության կողմից:

«Մանկապարտեզը հիմնվել է ազատագրական օրերից հետո, եւ պետք է իր գործավոր հիմքերով գոյատևի հարյուրավոր տարիներ,- ասում է Վիկի Մարաշյանը,- պատերազմից անմիջապես հետո Հայ օգնության միությունը ներկա էր Արցախում: Եկանք եւ հիմնեցինք մեր ման-

կապարտեզները՝ մտադրություն ունենալով կրթել նոր սերունդին, մեր ապագա զինվորին ու հրամանատարին: Այս ապագայով լեցուն երեխաները մեզ խրախուսում են առաջ տանելու մեր աշխատանքները: 15 հազար ՀՕՍ-ուհիներ զինվորի պես կանգնած եւ պատրաստ ենք ամեն կերպ աջակցել լինելու Արցախին եւ արցախցուն»: Նա շնորհակալություն հայտնեց ԼՂՅ փոխվարչապետ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանին՝ մանկապարտեզի ծրագիրը կյանքի կոչելու հարցում օժանդակություն ցուցաբերելու համար:

Նելլա Ղուկասյանը, ով Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի ստեղծման առաջին իսկ օրից մինչ այսօր հանդիսանում է մանկապարտեզի տնօրենը, խորին երախտագիտություն հայտնեց բոլոր այն մարդկանց, ում շնորհիվ իրականանում է մանկապարտեզի վերականգնման ծրագիրը: «Այս տարիների ընթացքում մենք կրթել եւ դաստիարակել ենք ավելի քան 2000 մանուկների, եւ հավատացած ենք, որ դեռ հազարավորներին կընդունենք մեր մանկապարտեզ՝ ճիշտ եւ հայեցի կրթելու համար: Նոր շենքը կհամապատասխանի արդի բոլոր պայմաններին: Այն հնարավորություն կտա մեզ՝ դաստիարակելու 120-150 երեխաների: Մենք սիրով կշարունակենք այն գործը, որն սկսել ենք Արցախյան պատերազմից անմիջապես հետո»:

Նշենք, որ մանկապարտեզի հին շենքը փլվել է սույն թվականի օգոստոսին, եւ անմիջապես սկսվել են շինարարական աշխատանքները: Շենքը պատրաստ կլինի շահագործման 2017 թվականի մայիսին...

Նույն օրը աշխարհի տարբեր երկրներից Արցախ ժամանած ՀՕՍ-ուհիների պատվին ՀՕՍ-ի Արցախի միավորը կազմակերպել է պաշտոնական ճաշկերույթ-դրամահավաք՝ Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի կառուցման նպատակով:

Ճաշկերույթին ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՅ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ԼՂՅ փոխվարչապետ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանը, ԼՂՅ ԱԺ փոխնախագահ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանը, ՀՀ Արցախի երիտասարդական միության անդամներ եւ այլոք:



Մանկապարտեզի շինարարության նպատակով կազմակերպված դրամահավաք-ճաշկերույթի արդյունքում հավաքվել է անհրաժեշտ գումարի կեսից ավելին՝ 647.000 ԱՄՆ դոլար:

Միջոցառման ընթացքում գեղարվեստական ծրագրով հանդես են եկել ՀՕՍ-ի Արցախի «Սոսե» մանկապարտեզների

սաները:

«Ապառաժ»-ի թղթակցի հետ զրույցում ՀՕՍ-ի արեւելյան ափի գրասենյակի պատասխանատու եւ «Սոսե» մանկապարտեզի շինարարության նպատակով կյանքի կոչված հանձնախմբի նախագահ Անժելա Մանուկյանը նշել է, որ ՀՕՍ-ի Կենտրոնական վարչությունը 3 ամիս է, ինչ քարոզչական աշխատանքներ է տանում աշխարհի ՀՕՍ-ի բոլոր կառույցների հետ, եւ արդյունքն արդեն ակնհայտ է: Աշխատանքը հեշտ չի եղել, սակայն բոլոր նրանք, ովքեր իրենց ներդրում են ունեցել ծրագրի իրականացման գործում գիտակցել են նպատակի կարեւորությունը:

«ՀՕՍ-ուհիներին համար պատիվ է Ստեփանակերտում ունենալ արդիական պահանջներով հագեցած մանկապարտեզ: Մենք ջանք ու եռանդ չենք խնայելու Արցախի «Սոսե» 8 մանկապարտեզների ցանցի վերանորոգման ծրագիրը շարունակական դարձնելու համար,-նշել է հանձնախմբի նախագահ Անժելա Մա-

«ԱՊՍՈՒԺ»

Իրավական տեսանկյունից Վիլսոնի իրավարար վճիռը ուժի մեջ է. Արա Պապյան



1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը կայացրել է իր իրավարար վճիռը և ղեկավարել 6-ին պաշտոնապես փոխանցել Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն մարմին: Այդ վճիռի պաշտոնական և ամբողջական անվանումն է՝ «ԱՄՆ նախագահի որոշումը Թուրքիայի ու Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապահովման և պահպանման վերաբերյալ»:

Այս տարի լրանում է Վիլսոնի իրավարար վճիռի 95 ամյակը: Այս առիթով «Ապառաժ»-ը գրուցել է իրավաբան, պատմաբան և դիվանագետ, «Մոդուս Վիվենդի» կենտրոնի ղեկավար Արա Պապյանի հետ:

- Պրն Պապյան, 95 տարի առաջ ընդունված այս փաստաթուղթը մնաց թղթի վրա: Ի՞նչ եք կարծում, որքանով է Վիլսոնի վճիռն այսօր արդիական:

- Մենք պետք է Վիլսոնի իրավարար վճիռն մոտենանք երկու տեսանկյունից՝ իրավական և քաղաքական: 95 տարի առաջ այս կարևոր վճիռը մնացել է թղթի վրա, որովհետեւ Հայաստանը որպես պետություն, դադարել է գոյություն ունենալ: Չկար Հայաստան ո՞ւմ պետք է վերադարձնել այդ հողերը:

Հարցը դիտելը իրավական տեսանկյունից, իրավական տեսանկյունից, այն ուժի մեջ է գտնվում, երբեք էլ բեկանվել, վերահաստատվել է առնվազն մի քանի անգամ, այդ թվում՝ ԱՄՆ Սենատի կողմից քննարկումների ժամանակ՝ 1927 թվականի հունվարին:

Միշտ վստահ եմ եղել, որ հնարավոր է այն հստակեցնել համապատասխան քաղաքական իրավիճակի փոփոխության պարագայում: Ես դա միշտ կապել եմ քրդական հարցի վերաբացման հետ: Ես այսօր, երբ մենք տեսնում ենք Միջին Արևելքում ընթացող փոփոխությունները, որտեղ դե ֆակտո քրդական պետությունը գոյություն ունի, երբ որ տեսնում ենք Թուրքիայի ներսում քրդերի և թուրքերի միջև սաստկացող հակամարտությունը, որը վերջին 20-25 տարում նման ծայրահեղ վիճակում էլ եղել, նորից համոզվում եմ, որ ուշ թե շուտ քրդերը դնելու են իրենց պետության նաեւ դե յուրե ստեղծման հարցը: Դա նշանակում է՝ իրենք պետք է հղում անեն որոշակի փաստաթղթերի, որոնց մեջ լինելու է Սենատի պայմանագիրը, որի 62-րդ հոդվածը հստակորեն կապված է Հայաստանի հետ: Այսինքն՝ Զորատանի հյուսիսային սահմանը Հայաստանի հարավային սահմանն է: Մենք պետք է պատրաստ լինենք, որպեսզի կարողանանք

պահն օգտագործել:

- Ի՞նչ եք կարծում, ՀՀ ներկայիս իշխանություններն ի գործունեն հետամուտ լինելու Վիլսոնի իրավարար վճիռի բարձրագույն ու օրինականացմանը:

- Ներկայիս իշխանություններն արտաքին քաղաքականության մեջ բազմաթիվ սխալներ են թույլ տալիս և տվել, որոնցից մեկը 2009 թվականի հոկտեմբերի Ցյուրիխյան արձանագրություններն են և, ընդհանրապես, կառավարման հետևանքով առաջացած ծանր սցիպալ- հոգեբանական վիճակը: Սակայն այս հարցով զբաղվելու համար բնավ պետք է, որ ամբողջ հայ ժողովուրդը և Հայաստանը ներգրավվի: Բավական է, որ պետությունը 4-5 համապատասխան մասնագետի աջակցի և հնարավորություն տա զբաղվելու այս հարցով: Ուրիշ բան է, որ մեր պետությունն այսօր դա չի անում և որպես գուզահեռ սխալ հայտարարություններ է անում:

Վիլսոնի իրավարար վճիռն իրականացումը ես չեմ կապում միայն Հայաստանի հետ, որովհետև հարցը չի լուծվելու հայ-թուրքական հարաբերությունների շրջանակում: Միշտ պետք է հիշել, որ Հայաստանի հողերի հարցը երբեք երկկողմ հարաբերությունների հարց չի եղել: Հարցը լուծվելու է մեծ շրջանակի մեջ, այսինքն՝ երբ որ Միջին Արևելքի վերածեստանությունն իսկ դա Հայաստանը չէ, որ պիտի լուծի, այլ մեծ տերությունները: Օրինակ, երբ ԱՄՆ-ն վերջնական եզրակացության եկավ, որ թուրքական հզոր պետությունն այլևս վստահելի դաշնակից չէ, որում բազմիցս համոզվել է, կամ հակառակը՝ երբ համոզվի, որ պետք է մեկ այլ դաշնակից ունենա՝ Զորատանը և ավելի մեծ Հայաստան: Մենք ինքներս չենք կարող ստեղծել մի իրավիճակ, որտեղ լուծվի մեր հողային հարցը, բայց պետք է պատրաստ լինենք՝ որ ստեղծվի այդ իրավիճակը, օգտվենք պահից:

- 95 տարի առաջ ԱՄՆ-ն կարող եղավ ընդունելու Վիլսոնի իրավարար վճիռը: Այսօր Ի՞նչն է փոխվել, որ ԱՄՆ-ն նույնիսկ խուսափում է Տեղասպանություն եզրույթն արտասանել:

- Նախ պետք է նշեմ, որ ԱՄՆ-ն առաջին պետությունն է, որը 1951 թվականին ընդունել է Հայոց ցեղասպանությունը, հետագայում Ռեյգանը է երկու անգամ ճանաչել այն: Շատերը դրա մասին չեն խոսում, որովհետեւ ձեռնտու չէ: Խորհրդային Միության տարիներին դա լուրջ էր մատնվում, քանի որ Խորհրդային Միության պարագլուխներն իրենց շահերն ունեին՝ ԱՄՆ-ն ներկայացնել վատ լույսի տակ: Հայկական լրագրագետները էլ առանձնապես չի ուզում դրա մասին շատ խոսել, որովհետեւ դրա անվան տակ այն անընդհատ դրամական միջոցներ է հավաքում և անընդհատ, այսպես ասած, պայքարի մեջ է:

95 տարի առաջ իրական էր իրավարար վճիռի կայացումը, քանի որ Թուրքիան դաշնակից էր ԱՄՆ-ին: Այն ժամանակ նույնիսկ հակաթուրքական տրամադրություններ կային, այդ թվում՝ նաեւ Հայոց ցեղասպանության պատճառով: Հսկայական թվով միսիոներներ կային, որոնք Օսմանյան կայսրության

նում Հայոց ցեղասպանության տարիներին միսիոներական առաքելություն էին իրականացնում և ակնատեսն էին Թուրքիայի ոճրագործություններին: Կան իրենց կողմից հրապարակված հսկայական քանակությամբ կոլեկտիվ: Իրավիճակը փոխվեց այն բանից հետո, երբ ԽՍՀՄ-ը սկսեց իրականացնել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո էքսպանսիոնիստական քաղաքականությունը դեպի Արևելյան Եվրոպա: Հիտլերյան լծից ազատագրումը բերեց այդ երկրների՝ Ստալինի լծի տակ հայտնվելուն: Բնականաբար, Թուրքիան վախեցավ և 1952 թվականին մտավ ԼճՏՕ-ի կազմի մեջ, և ԱՄՆ-ն, որպես ԼճՏՕ-ի դաշնակից երկիր, պետք է դաշնակցեր նրա հետ:

Ես այդ առումով բարձր եմ գնահատում ԱՄՆ դիրքորոշումը և հավատարմությունը սեփական դաշնակցի նկատմամբ: Իհարկե, վատ է, որ դա մեր դեմ էր ուղղված, սակայն դաշնակցին աջակցելը լավ է, ոչ թե մեր դաշնակցի նման, որը մեր թշնամուն գեղ է վաճառում: Փոխվել է դաշնակցական կապի ուժեղությունն ու վստահելիությունը: Հետաքրքիր երեւոյթ է տեղի ունեցել Թուրքիայի հզորացումը բերում է Արեւմուտքի հետ շահերի բախման, և ինչպես արեւմտյան պաշտոնյաներն են ասում՝ Թուրքիան դառնում է ավելի քիչ կառավարելի: Իսկ եթե այդպես է, ուրեմն պետք է բերել ավելի լավ կառավարելի վիճակի, իսկ ավելի կառավարելի կլինի Թուրքիան, եթե այն լինի ավելի փոքր և ավելի թույլ: Այսինքն՝ Թուրքիայից Զորատանի տրոհումը կբերի Թուրքիայի հզորության անկման: Դրան գուզահեռ՝ կա նաեւ Եվրոպական միության շահը: Թուրքիան 1960-ականներից առ այսօր սպասում է Եվրոպական միությանն անդամակցելուն, սակայն չի ընդունվում: Պատճառները շատ են, սակայն մի ուրիշ կարևոր խնդիր կա. Թուրքիան իր ազգաբնակչության թվով Գերմանիային հավասար է, այսինքն՝ եթե նա ընդունվի ԵՄ, նույնքան պատգամավորներ կունենա, որքան Գերմանիան: Առաջիկա 20-30 տարիների ընթացքում սպասվում է, որ Թուրքիայի ազգաբնակչությունը կաճի և կգերազանցի Եվրոպական երկրներին: Կստացվի, որ ԵՄ-ում նա կունենա ամենաշատ պատգամավորները, և պետք է կառավարի ԵՄ-ն: Ոչ մի Եվրոպացի թույլ չի տա, որ ինքը դառնա Թուրքիայի ձեռքին խաղալիք: Եթե Թուրքիան տրոհվի մի քանի պետությունների, նա կլինի մարտելի երկիր:

Իրավիճակը փոփոխվում է, և ըստ այդ փոփոխվող իրավիճակի՝ փոխվում են նաեւ հարաբերությունները պետությունների հետ:

- Տեղասպանության ճանաչման գործընթացում բացակայում են տարածքային պահանջները: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է պատճառը:

- Շատ հաճախ այն բանաձեւերը, որոնք ընդունվում են, ձեւակերպվում են այնպես, որ քիչ հակառակորդներ ունենան և կարողանան անցկացնել խորհրդարաններում: Տարածքային պահանջներ չենք գործը շատ է հեշտացնում: Կարող եմ նշել, որ, օրինակ, էլեկտրոկ նույն Կանադայի օրինակին, որին մասնակից եմ եղել, եթե տարածքային հարց մտցվեր՝ էր անցնի բանաձեւերը, որովհետեւ նրանց զգալի մասը

դեմ կբավարկեր: Մյուս կողմից էլ՝ չեն կարող տարածքային հարց մտցնել, եթե պետության մակարդակով դա չի ներկայացվում: Նրանք կասեն՝ դուք ուզում եք տարածքային հարց մտցնել այն դեպքում, երբ ՀՀ իշխանությունները չեն խոսում դրա մասին, դեռ ավելին՝ բազմիցս ասել են, որ որեւէ տարածքային պահանջներ չունեն:

Բանաձեւերով չէ, որ այս հարցը լուծվելու է: Դրանք, այսպես ասած, ճանաչողական բնույթ ունեն, մի քիչ էլ՝ բարոյական ճնշում է Թուրքիայի վրա: Եթե ամբողջ աշխարհն ընդունի Հայոց ցեղասպանությունը, եթե անգամ Թուրքիան ընդունի Տեղասպանությունը, դրանից բոլորովին չի բխում, որ երկրորդ քայլը կլինի հատուցումների հարցը: Դրանք երկու տարբեր երեւոյթներ են:

- Շատ հաճախ ՀՀ նախագահի մակարդակով նշվում է հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների վերահստատման մասին, սակայն Ցյուրիխյան արձանագրություններն իրենց մեջ ամբողջովին պարունակում էին նախապայմաններ, որոնցից մեկը Թուրքիայի ներկա սահմանի ճանաչումն է: Արդյո՞ք Թուրքիայի ներկա սահմանի ճանաչումը Վիլսոնի իրավարար վճիռի իրականացման համար ճակատագրական չի լինի:

- Ես ինքս կողմ եմ Թուրքիայի հետ հարաբերությունների վերահաստատմանը, սակայն՝ առանց նախապայմանների: Եթե Ցյուրիխյան արձանագրությունների փոխարեն լիներ երկու տող հայտարարություն, որ կողմերը որոշել են վերահաստատել դիվանագիտական հարաբերություն, ևս լրիվ կողմ կլինեի, սակայն Ցյուրիխյան արձանագրություններն ամբողջությամբ ենթադրում են նախապայմաններ, հետևաբար՝ այդ արձանագրությունները շատ բացասական են մեզ համար: Դրանք ամբողջովին չեն այդ հողերից, անգամ դրա ճանաչելու պարագայում, որ այդ հողերը քուն են, դու չես կարող այն իրականացնել, որովհետեւ դատարանը կարող է ասել՝ ես չեմ քննում այդ հարցը, քանի որ վճիռն առարկա չէ:

Իրավարար վճիռի իրականացումը պետք է լինի հետեւյալ կերպ՝ ՄԱԿ-ի արդարադատության դատարանը իրավասություն ունի որեւէ իրավական փաստաթղթի մասին կարծիք տալու: Եթե դու հրաժարվում ես այդ հողերից, անգամ դրա ճանաչելու պարագայում, որ այդ հողերը քուն են, դու չես կարող այն իրականացնել, որովհետեւ դատարանը կարող է ասել՝ ես չեմ քննում այդ հարցը, քանի որ վճիռն առարկա չէ:

- Վիլսոնի իրավարար վճիռն իրականացումը ինչպե՞ս կարող է անդադառնալ Թուրքիայի հայության վրա:

Թուրքիայում ապրող հայության վրա այն կարող է տարբեր անդադարձ ունենալ, սակայն եթե Թուրքիայում ցանկանան ճնշել այնտեղ ապրող հայերին, ապա հազար ու մեկ պատրվակ կգտնեն. մենք բազմիցս դրա ակնատեսը եղանք: Եթե մենք այդպես մտածեինք, ապա Դարաբաղի հարցն էլ չպիտի բարձրացվեր՝ հաշվի առնելով, որ վտանգի տակ էր դրվում Ադրբեջանում ապրող հայերի անվտանգությունը: Կան ազգային ձգտումներ, մղումներ, որոնք արդարացիում են ցանկացած բան: Ինձ համար Հայաստանի շահերը շատ ավելի բարձր են կարևոր են, քան հայկական որեւէ համայնքի շահը:

Հարցազրույցը Արմինե ՆԱՐԻՅԱՆԻ

Բերքի տոն Ստեփանակերտում



Արդեն երրորդ տարին է՝ հոկտեմբերի երկրորդ կիրակին Արցախում նշում են Գյուղատնտեսի օրը, որն ուղեկցվում է բերքի տոնով:

Հոկտեմբերի 11-ին կազմակերպված բերքի տոնի միջոցառումներին ներկա էին Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեյ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, պաշտոնատար այլ անձինք:

Տոնավաճառում-ցուցահանդեսին ներկայացված բերքն ու բարիքն օրինել է Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեյ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Ինչպես ամեն տարի, այս անգամ են Ստեփանակերտի «Վերածննդի» հրապարակում կազմակերպվել էր տոնավաճառ-ցուցահանդես, որին առանձին տաղավարներով իրենց մասնակցություն են բերել Արցախի՝ գյուղատնտեսական մթերքներ արտադրող ընկերությունները, բոլոր շրջաններից մայրաքաղաք ժամանած, գյուղմթերք արտադրողները՝ ներկայացնելու իրենց ձեռքով մշակած ու պատրաստած արտադրանքը:

Մարտակերտի շրջանի Հովտաշեն համայնքի բնակիչ Սվետլանա Սարգսյանը 3-րդ անգամ է մասնակցում տոնավաճառին: Նա փոխանցեց, որ տոնավաճառին ներկայացրած մեծ քանակով մրգերը, որոնք մշակում են իրենց տնամերձ հողամասում, հիմնականում վաճառվել են, սակայն սեփական արտադրության գինին ու օղին չեն կարողացել

ամբողջությամբ վաճառել: Այնուամենայնիվ, արդյունքից դժգոհ չեն, և մեծ ուրախությամբ ու ոգեւորությամբ են մասնակցում բերքի տոնին:

Մատաղիս սահմանամերձ համայնքի բնակիչներից մեկի խոսքերով՝ մեծ խանդավառությամբ են մասնակցում տոնավաճառին, և սա եւս մեկ առիթ է՝ ցույց տալու աշխարհին ու հակառակորդին, որ Արցախի սահմանամերձ գյուղերի բնակիչները շարունակում են կառչած մնալ սեփական հողին և քրտնաշան աշխատանքի շնորհիվ բերք ու բարիք արտադրել:

«Ապառաժ»-ի թղթակիցը գրուցել է նաեւ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական բաժնի պետ Կարեն Միրզոյանի հետ, ով տեղեկացրել է, որ այս տարվա տոնավաճառ-ցուցահանդեսին ներկայացած համայնքների թիվը եւ ապրանքների տեսակահին գերազանցել են նախորդ 2 տարիների ընթացքում կազմակերպած տոնավաճառների թվին:

«Տոնավաճառ-ցուցահանդեսին այս տարի ներկայացել են 200-ից ավելի համայնքներ՝ ներառյալ սահմանամերձ գյուղերից ներկայացուցիչներ,- նշել է Կարեն Միրզոյանը,- ԼՂՀ կառավարությունը տրամադրել է վառելիքի գումարը տոնավաճառին մասնակցելու համար:

Կարեն Միրզոյանի խոսքերով՝ ներկայացրած բերք ու բարիքի տեսակահին 95%-ով վաճառվել է: Ապրանքների գների մասին Կարեն Միրզոյանը նշել է. «Գյուղնախարարությունը հորդորել է տնտեսվարողներին՝ շուկայականից ցածր գնով վաճառել ապրանքատեսակները: Նշեմ, որ ապրանքների գները շուկայականից տարբերվում էին»:

«ԱՊՍՈՍԺ»



Արցախում տրվել է Էկոգյուղի ծրագրի մեկնարկը

Արցախի կառավարությունն ու «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամը Ստեփանակերտում ազդարարել են Արցախում Էկոգյուղի հիմնման ծրագրի մեկնարկը. հաղորդում է «IDeA» հիմնադրամի հանրային կայքի բաժինը:

Ծրագրի նպատակը Ասկերանի շրջանում զբոսաշրջության, Էկոգյուղատնտեսության զարգացումն է և կրթական համալիրի ստեղծումը: Հեղինակավոր մասնագետներն ու փորձագետները կփոխանցեն հյուրընկալության, Էկոլոգիական շինարարության ու Էկոգյուղատնտեսության ոլորտներում առաջատար փորձը՝ նպաստելով տեղի մասնագիտական կարողությունների զարգացմանը:

«Համալիրն ընդգրկելու է համապատասխան ուսումնական կենտրոններ, զբոսաշրջային ենթակառուցվածքներ, մոդելային Էկոֆերմա, Էկոարտագրության կազմակերպման հնարավորություններ: Չբոսաշրջային ենթակառուցվածքների լայն համակարգի ստեղծման շնորհիվ Էկոգյուղի համալիրը գրավիչ վայր կդառնա զբոսաշրջիկների համար: Ծրագրի իրագործումը ոչ միայն կնպաստի տարածաշրջանի առանձնահատկությունն ընդգծող և դրանք աշխարհին ճանաչելի դարձնող բրենդի զարգացմանը, այլև տարածաշրջանի համար կստեղծի տնտեսական զարգացման նոր հնարավորություններ»,- ասված է IDeA-ի հաղորդագրությունում:

Ծրագիրը Ստեփանակերտում ներկայացրել են խորհրդատու կազմակերպությունների՝ շվեյցարական «Gutundgut» ընկերության ներկայացուցիչներ Ռաֆայել Էնզլերն ու Ջրիստիան Սյուլլերը և բրիտանական «Tim Flynn Architects» ընկերության ղեկավար Թիմ Ֆլինը: Շնորհանդեսին ներկա են եղել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, «IDeA» հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Վարդանյանը, հյուրեր:



Ծրագիրն իրականացվելու է «IDeA» հիմնադրամի կողմից՝ Արցախի իշխանությունների աջակցությամբ:

«Մենք շատ երկար քննարկումներ ունեցանք թե՛ Արցախի կառավարության, թե՛ արցախցիների հետ: Կարելի է, որ այն չդառնա զուտ արտասահմանյան նախագիծ, երբ մարդիկ այցելում, հանգստանում՝ գնում են, այլ իսկապես ընդգրկված լինի արցախյան Էկոհամակարգում, լինի Արցախի ընդհանուր նախագիծը: Հիմքում այն գաղափարն է,

խնդիրը»,- ասել է «IDeA» հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Վարդանյանը:

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն իր ելույթում կարելի է ծրագրի նշանակությունը հանրապետության և նրա տնտեսության համար: «Էկոզբոսաշրջության զարգացման յուրահատկությունն այն է, որ այն ուղղակի են անուղղակի կերպով առնչվում է տարբեր ոլորտների հետ: Դա բնության ու պատմամշակութային ժառանգության պահպանումն է, ենթակառուցվածքների և հյուրանոցների ցանցի արդիականացումն ու ընդլայնումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, տեղական արտադրության խթանումը, ծառայությունների ոլորտին նոր որակ հաղորդելը, տարբեր երկրների հետ կապերի զարգացումն ու խորացումը, Արցախն արտաքին աշխարհին ճանաչելի դարձնելը և այլն: Բնական է, որ ծրագրի իրականացումն իր դրական ազդեցությունը կունենա մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը»,- ասել է Բ. Սահակյանը:

Նա երախագիտություն է հայտնել Ռուբեն Վարդանյանին՝ ընդգծելով, որ նրա մասնակցությունը ծրագրին լուրջ նախադրյալներ է ստեղծում այն հաջողությամբ իրականացնելու համար:

Նախնական տվյալներով՝ նախագծի իրականացման համար կներդրվի շուրջ 20 մլն դոլար: Աշխատանքները կմեկնարկեն 2015թ. ընթացքում:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկվող աշխարհամարտ



օդուժը միջազգային կանաչ լույս է ստացել գործի անցնելու: Նման ինքնուրույն Նախաձեռնողականությունը կարող է անկանխատեսելի հետեւանքներ ունենալ, նկատվել արկածախնդրություն եւ առիթ տալ իրադրությունների անվերահսկելի ահագնացման: Վաշինգտոնի եւ Մոսկվայի՝ ժամանակի առումով իրար խաչվող հայտարարությունները մտածել են տալիս միջազգային կանաչ լույսի մասին: Վաշինգտոնը հայտարարում էր, որ Նախագահ Ասադի հրաժարականը անմիջական պահանջ ու առաջադրանք է այսօր, մինչ Մոսկվան խոսում էր նույն անձնավորության՝ իշխանության անցման հանգրվանին համաձայն լինելու մասին:

Ռուսական զինվորական գործույնի աշխուժացումը սիրիական պատերազմում լայնածավալ եւ տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է սովորել: պատերազմի սերտորեն զուգորդվել է տեղեկատվականը: Միեւնույն լայնածավալությամբ հարվածվող թիրախների մասին կան հակասական լրատվություններ, տեղեկություններ, վերլուծումներ: Ոչ միայն բացարձակ, այլ ընդհանրապես հանգրվանային եզրակացությունների հանգեղը նույնիսկ կարող է պայմանական լինել, եւ անհամապատասխան՝ իրական իրավիճակներին:

Գերտերությունների այս հայտարարություններն իրար լրացնող են: մի կողմից խոսում են իշխանափոխության ոչ անմիջականության, մյուս կողմից՝ Նաե ոչ երկարատեւության մասին՝ անուղղակիորեն ընդգծելով, որ առաջին գերխնդիրն այսօր է՝ ինչպես զեզոքացումն է:

Սակայն է՝ ինչպե՞ս զեզոքացումը պետք է ընկալել մասնակի հասկացողությամբ եւ ոչ ամբողջական: է՝ ամբողջական չեզոքացումը՝ եթե միջազգային ընտանիքի համար առաջնային օրակարգ է, ապա գտնվող վրա արձանագրվող դեպքերը կստանան կտրուկ, հանկարծակի եւ համալիր բնույթ: Նախքան ռուսական կործանիչների հանդես գալը՝ աշխարհն ականատես դարձավ ամերիկյան օդային սահմանափակ հարձակումների, որոնք Նաե չունեցան հետեւողականու-

թյուն: Ռուսական հարվածները՝ թե՛ օդային եւ թե՛ ռազմանավային հեռահար, ճիշտ է, որ ամերիկյան հարվածների սահմանափակվածությամբ չեն, բայց Նաե ամբողջական չեզոքացման միտող հարվածներ չեն՝ գեթ այս հանգրվանին: Իհարկե, անհրաժեշտ է իրազեկումը խփվող թիրախներին, հարվածվող գոտիներին, մարդկային եւ կյանքական վնասներին, բայց՝ մանավանդ գետնի վրա արձանագրվող կամ չարձանագրվող տեղաշարժերին:

Ռազմափորձագետների տեսակետով՝ օդային եւ հեռահար հրթիռակոծումները միտված են ուղի բացելու Սիրիայի կառավարական ցամաքային ուժերի տեղաշարժվելուն: Առ այս պահը նկատվել են զինվորական շարասյունների աշխույժ երթուղիներ, այսուհանդերձ՝ դեռեւս թեական են Նոր շրջանների վերագրավումները կառավարական ուժերի կողմից: Իրադրությունների ընթացքը հուշում է որոշակի միտում ծովեզրյա Սիրիան եւ այն դարպասող տարածքները մաքրագտելու եւ կայունացնելու ընդհանուր ծրագրի գոյության:

Նկատվում է Նաե մի կողմից քրդական զինյալ ուժերի պատրաստակամություն՝ ողջունելու ռուսական ներգրավումն ու աջակցությունն ցույց տալու կառավարական ուժերին, ամրակայվող «կլավիստանին» առընթեր պահելու իրողապես ինքնավար սիրիական Զուրդիստանը:

Ռուսական զինվորական միջամտությունից հետո հայտնապես երկրորդ կարգ է անցել իրանյանը, որը հակառակ հայտարարողական մակարդակի վրա

ԱՄՆ-ի հետ իր ունեցած ելույթային հարաբերություններին՝ աշխարհաքաղաքական բնույթի օրակարգերով բանակցային փուլ է անցել Արեւմուտքի հետ:

Անկարայի պահանջով գումարված ՆԱՏՕ-ի բրյուսելյան ժողովը որոշում էր քննարկել ռուսական միջամտության լույսի ներքո սիրիական զարգացումները: Այս առիթով Նաե ՆԱՏՕ-ն վերահաստատում է Թուրքիան պաշտպանելու եւ անհրաժեշտության դեպքում Թուրքիա զորք ուղարկելու իր պատրաստակամությունը: ՆԱՏՕ-ի այս հայտարարությունները հակազդեցություն են ռուսական օդուժի՝ Թուրքիայի նկատմամբ կատարած կրկնակի սահմանախախտումներին:

Տարածաշրջանում ռուսական ռազմական գործույնի հայտնվելն ի վնաս գլխավոր այլ խաղացողի՝ Թուրքիայի է: Առ այս պահը՝ այն, ինչ որ երեւում է՝ ամերիկյան կանաչ լույս ստացած ՌԴ-ն օդային եւ հեռահար հարձակումներով Նախ բարձրացնում է կառավարական ուժերի բարոյահոգեբանական իրավիճակը, ցամաքային տեղաշարժերի ճամփա հարթող գործողություններ իրականացնելով միտում է ամրակայել ծովեզրյա սիրիական «կլավիստանը»: Մինչ Թուրքիան փորձում է հենվել ՆԱՏՕ-ի վրա, մերժված անվտանգության գոտի առաջացնելու իր առաջարկով, առնվազն կշանա սիրիական Զուրդիստանի վրա վերահսկողության լծակներ պահպանել:

Տեղի ունեցածը պարզապես համաշխարհային պատերազմի տարբերակ է: սահմանափակ, համաձայնեցված եւ վերահսկելի բնույթով:

Շահուհ ԳՆՆՏՄՐՅԱՆ

Թուրքիան եւ 1990-ական թվականների Ղարաբաղյան հակամարտությունը. պատմահամեմատական վերլուծություն



մի կողմից՝ ինչպես Նորակազմ ադրբեջանական պետության ազգային ինքնություն, եւ մյուս կողմից՝ պատմականորեն կազմված հայկական ինքնության միջեւ հակամարտություն, ինչը Նաե ունի քաղաքական եւ մշակութային ազդակներ, որոնք նկարագրված են հակամարտությունն ուսումնասիրած ոլորտի բազմաթիվ հրատարակություններում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ Թուրքիայի մտեցումը պատմության մեջ բազմաթիվ զուգահեռներ ունի: Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքում պակտոկոնտինենտի քաղաքականությունը՝ վարելով՝ երիտասարդ թուրքերի կուսակցության նպատակն էր՝ Օսմանյան կայսրության մեջ բնաջնջել հայերին եւ պատրաստվել գրավել Անդրկովկասը Ռուսական կայսրության թուրքախոս համայնքների հետ կապ հաստատելու համար: Մեծամասամբ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղն արգելք էր Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության իրականացման ճանապարհին: Թուրքական գործերը գրավել են Բաքուն՝ շարդելով ավելի քան 10,000 հայերի: Թուրքական բռնագրավումի տակ Ադրբեջանի կառավարությունը հայկական տեղական ինքնապաշտպանական ուժերի կողմից բուռն դիմադրության հանդիպեց: 1919-ին եւ 1920-ին ադրբեջանական թուրքական գործերը Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում 15,000 հայերի շարդեցին: Համաշխարհային Ա. պատերազմում պարտություն կրած թուրքական ուժերի՝ Հարավային Կովկասից հեռանալուց հետո, «թուրքական ազգակ»-ը շարունակեց գոյատեսել Ադրբեջանում,


որովհետեւ հազարավոր թուրք սպաներ եւ զինվորներ զինվորագրվեցին ադրբեջանական բանակում եւ գործուն կերպով մասնակցեցին Ղարաբաղի հայերի դեմ ադրբեջանական բանակի գործողություններին: Հակամարտության Նոր հանգրվանը սկսեց 1988 թվականի փետրվարին, երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդը որդեգրեց որոշում՝ կոչ անելով Հայաստանի, Ադրբեջանի Գերագույն խորհուրդներին ու Խորհրդային Միությանը՝ ԼՂԻՄ-ի վերահսկողությունը փոխանցել Խորհրդային Հայաստանի Հանրապետությանը: Հակամարտության սկզբին Թուրքիան զգույշ կեցվածք որդեգրեց՝ վախենալով խորհրդային կառավարության կողմից ժխտական հակազդեցության հավանականությունից: Խորհրդային Միության անկումից մեկ ամիս առաջ Թուրքիան առաջինը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը՝ դրանով իսկ ստանձնելով Ադրբեջանի պաշտպանի դերը: 1990-ականների սկզբին՝ Խորհրդային Միության քայքայումից հետո, Թուրքիայի պակտոկոնտինենտի վերահսկողության ակտիվացումը, եւ Անկարան մղվեց աշխարհաքաղաքական Նոր դերակատարության ձգտելուն: Թուրքական ազդակը Լեռնային Ղարաբաղի հակամարտության վրա ազդող տարբեր ազդակներից մեկն էր: Մի շարք թուրքախոս երկրներ մասնակից դարձան թե՛ հակամարտության լուծման, թե՛ մագլցման: Վերջինս մասնավորաբար ակներեւ էր Թուրքիայի ադրբեջանամետ կեցվածքում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ թուրքական միջամտության բազմաթիվ փաստերն ու ազդակները նկատի ունենալով՝ պետք է նշել, որ Թուրքիան, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ պատե-

րազմում բացահայտ կերպով աջակցելով Ադրբեջանին, մասնակից էր հակամարտությանը եւ ոչ թե՛ այդ խնդրի լուծմանը: Հակամարտության մեջ թուրքական մեղսակցությունը ներառում է հետեւյալ բաղադրիչ մասերը՝ զինվորական միջամտության սպառնալիքներ, ուժի գործադրման միջոցով ճնշում, Հայաստանի դեմ ապրանքների եւ զինատեսակների փոխադրության ճանապարհի շրջափակում, Ադրբեջանին զինվորական աջակցության տրամադրում, հակահայ քարոզչություն եւ Հայաստանի տեղեկատվական մեկուսացման ենթարկելու Նախաձեռնություն, միջազգային կազմակերպություններում ադրբեջանական շահերի ջատագովում: Թե՛ Ադրբեջանը, թե՛ Թուրքիան փորձում են հակամարտությունը ներկայացնել իբրեւ «թուրք եղբայրները» հայերի դեմ ճակատում, որպեսզի ապահովեն Կենտրոնական Ասիայի պետությունների աջակցությունը: Թուրքիան մաս կազմեց Ադրբեջանի Նախաձեռնած՝ Հայաստանի տնտեսական շրջափակմանը եւ մերժեց դիվանագիտական ու առևտրային հարաբերություններ հաստատելու՝ Հայաստանի առաջարկը: Անկարայի՝ Հայաստանի հետ կապեր հաստատելու Նախապայմաններն այն էին, որ Հայաստանը պետք է՝

- Դադարեցնի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը,
- Հրաժարվի Թուրքիայի դեմ հողային պահանջներից,
- Իր գործերը հեռացնի Ադրբեջանից եւ ճանաչի ու ընդունի Լեռնային Ղարաբաղի վրա Ադրբեջանի գերիշխանությունը:

ԻՍ ՄԱՍ / armenianhouse.org

Մեր Նորիկը



տի մաթեմատիկայի բաժնում: Դեռևս ուսանողական տարիների ընդհատակյա պայքարի մասնակից Նորայր Դանիելյանն իր անձնական օրինակով շատերի համար ուղենշեց պայքարի մեծ ճանապարհը: 1990թ. ամռանը Նորայր Դանիելյանի նախաձեռնությամբ ու շրջանի ղեկավարների աջակցությամբ վերակառուցվեց Ջանյաթաղի պաշտպանական կարելուր նշանակություն ունեցող դաշտային օթեանը՝ կնքվելով Քաջավան անունով: Նորայր Դանիելյանն էլ համարվեց համայնքի պետ: Սակայն

Հոկտեմբերի 18-ը «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, Արցախյան շարժման ու պատերազմի առաջամարտիկ, Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար, ՊԲ փոխգնդապետ, ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ՀՀ Դաշնակցության գաղափարակիր Նորայր Դանիելյանի հիշատակի օրն է:

1990թ. հոկտեմբերի 24-ի լուսաբացին Նորայրը 2-րդ անգամ գերեզմարվում է եւ մեկ տարի ու հինգ ամիս մնում Շուշիի, ապա՝ Բաքվի բանտերում: Միայն 1992թ. ապրիլին է ազատվում ու վերադառնում հայրենի գյուղ՝ Վարդաձոր՝ շարունակելու իր կիսատ թողած պայքարը: Շրջանում անհավասար ու թեժ մարտագործողությունների ընթացքում երկու անգամ վիրավորվել է, ապաքինվելուց հետո վերադարձել շարքեր: 1992թ. նոյեմբերին Ն. Դանիելյանը նշանակվել է Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար: Գունդը նրա ղեկավարությամբ մասնակցել է բազմաթիվ, այդ թվում՝ Մարտակերտի, Քարվաճառի եւ Կուբաթլուի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին:

Չաջողված ռազմական գործողությունների համար 26-ամյա հրամանատարին շնորհվել է փոխգնդապետի կոչում: Մարտակերտի ազատագրումը Նորայրի համար անհրաժեշտ նպատակ էր. նա համոզված էր, որ հերոս ու խաղաղասեր արցախցին պիտի իր հողում ապրի: «Այստեղ մենք ընկերներ ենք բոլորս՝ մեկս մյուսի թիկունքին կանգնած, եւ մեր հողն ենք պաշտպանում. սա է մեր հաջողության գաղտնիքը», - ասում էր Նորայրը: 1993թ. նա ընտրվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Ն. Դանիելյանն ապրեց ընդամենը 26 տարի: 1993 թվականի հոկտեմբերի 18-ին դավադիր անհայտ ձեռքը խլեց նրա մատաղ կյանքը: Դեռ մահու նա արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի: Ազգային-ազատագրական գոյապայքարում Նորայրը կատարել է հայրենիքի զինվորի ու հրամանատարի, մահապար-

տի ու նահապետի դերը: Նորայր Դանիելյանի ուսանողական տարիների ընկեր, ՀՀ անդամ Սամվել Գրիգորյանը նշում է, որ Նորայր Դանիելյանի միակ ցանկությունն ու նպատակն էր հարազատ Մարտակերտն ու Արցախն ազատ տեսնելը: «Նորայրի կատարած ազգասեր գործն անմահ է: Նա Արցախյան շարժման ակտիվիստ էր, «երիտասարդական միության անդամ, ցույցերի նախաձեռնողներից: Բնավորությամբ հանգիստ, բարեհամբույր Նորիկը կոչվում խիզախ էր, աննահանջ,- նշում է Սամվել Գրիգորյանը,- Նորայրը մեր բոլորիս պատիվն է: Ցավում եմ միայն նրա համար, որ նա այդպես էլ չկարողացավ տեսնել իր երազած հայրենիքը: Նա դեռ շատ գործ ուներ անելու»:

«Ցանկացած ժամանակաշրջան պահանջում է իր հերոսներին, եւ Նորայր Դանիելյանն անհրաժեշտություն էր Արցախյան ազատամարտում,- նշում է ուսանողական եւ կուսակցական ընկեր Մասիս Սուլեյմանյանը,- միայն դրական հիշողություններ ունեմ Նորայրի հետ կապված: Նա շատ ընկերասեր էր, նրա կարճ, սակայն բովանդակալից կյանքն ամբողջովին նվիրում էր Արցախին ու նրա ազատագրման գործին...»:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել եմ Բաղդադում, 41 տարի է բնակվում եմ ԱՄՆ-ում, բայց ամեն մի օրս ապրում եմ հայրենիքով



որովհետեւ այդ օրերին արցախցի կանանց մեջ տեսա շատ ու շատ սեւազգեստ այրիներ, կոտորված սրտեր, մանուկների տխուր աչքեր», - պատմում է իր՝ Արցախ կատարած առաջին այցի մասին: ՀՕՄ-ի «Սոսե» մանկապարտեզները կոչված էին իրենց հովանու տակ վերցնելու Արցախյան ազատամարտում զոհված ու վիրավորված ազատամարտիկների երեխաներին, ապա նաեւ՝ կարիքավոր ընտանիքների երեխաներին: «ՀՕՄ-ն ուզում էր ինչ-որ կերպ նրանց վերադարձնել իրենց կորցրածը՝ մանկությունը: Մենք բոլորս հայ մայրեր ենք եւ լավ գիտենք, թե ինչ է պետք մեր մանուկներին ու մեր կանանց», - նշում է նա եւ ավելացնում, որ այսօր Արցախում գործում են ՀՕՄ-ի թվով 8 «Սոսե» մանկապարտեզներ:

Սեդա Խոջայանն այն հայ կանանցից է, ով, ինչպես ինքն է ասում, իր եւությամբ կոչված է ծառայելու հայ ժողովրդին, մասնակցելու հայրենիքի բարեկեցության ու զարգացման պատասխանատու գործին:

Այսօր նա հերթական անգամ Արցախ է եկել աշխարհի տարբեր ծագերից ժամանած ՀՕՄ-ուհիների հետ՝ մասնակցելու Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի հիմնօրհներդ արարողությանը, ինչպես նաեւ՝ Արցախի միավորի կողմից կազմակերպված ճաշկերույթ-դրամահավաքին, որը պետք է ուղղվի Ստեփանակերտի մանկապարտեզի վերակառուցմանը: Սեդա Խոջայանը հանդիսանում է ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության կողմից Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շինարարության նպատակով կյանքի կոչված դրամահավաք հանձնախմբի անդամ՝ մարքեթինգի եւ քարոզչության գծով պատասխանատու: «Հանձնախմբում ընդգրկված են ամեն երկրից երկու ընկերուհի: Ես եւ ժամանակը Արեւմտյան շրջանն ենք ներկայացնում: Հանձնախմբում շատերս իրար չենք ճանաչում, բայց շատ կարճ ժամանակահատվածում լծվեցինք աշխատանքի՝ գիտակցելով նպատակի կարեւորությունը: Պատրաստեցինք հատուկ տեղեկատվական թերթիկներ, որոնք պատմում են մանկապարտեզի մասին, նշում նրա կարեւորությունն Արցախի մանուկների կյանքում: Այնուհետեւ

տեւ քարոզչության հարցում մեզ օգնեց Արցախի մեր միավորի կողմից պատրաստված տեսահոլովակը, որը ես ցույց եմ տալիս ամենատարբեր մարդկանց, հայ բարերաների՝ ներկայացնելով մեր դրամահավաք ծրագիրը: Ամերիկայում մեծ տպավորություն ունեցավ դա եւ սկսվեցին նվիրատվությունները», - պատմում է հանձնախմբի աշխատանքների մասին եւ ավելացնում, որ այսօր Ստեփանակերտի մանկապարտեզի շինարարության համար անհրաժեշտ գումարի կեսից ավելին արդեն հավաքվել է: «Մենք ուրախություն ենք ապրում, որ աշխարհասփյուռ հայության ուժերով եւ մեր ՀՕՄ-ուհիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ ի կատար է ածվում հայանվեր ես մեկ գործ», - նշում է Սեդա Խոջայանը: «Իմ կողմից կյանքի է կոչվել մի այսպիսի ծրագիր. ՀՕՄ-ի Արեւմտյան շրջանի գրասենյակի մուտքում դրվել է մշտադալար ծառ, որը կարելուր իմաստ է իր մեջ ամփոփում: Արմատները ՀՕՄ-ի շրջանային վարչություններն են, ճյուղերը՝ մասնաճյուղերը, իսկ տերեւները բոլոր այն մարդիկ, ովքեր կարող են նվիրատվություններ անել: Սկսեցինք «արմատներից դեպի տերեւներ» դրամահավաքի աշխատանքները, եւ այս ձեւով շատ օգնեց մեզ: Նույն ծառից պետք է տեղադրենք նաեւ կառուցվելիք մանկապարտեզի մուտքում՝ որպես մեր միասնական կամքի դրսևորման, ՀՕՄ-ի կառույցների փոխհամագործակցության եւ պայծառ գործի հարատեւության խորհրդանիշ: Բացի այդ, օգտագործեցինք նաեւ այլ եղանակներ. 8 դասարան, 3 քրահ պիտի ունենա մանկապարտեզը, ինչպես նաեւ դաշտ՝ հատուկ ամառային ճամբարներ կազմակերպելու համար: Ամեն մի դասարան գնահատեցինք 25000 դոլար եւ նշեցինք, որ դասարանը կկոչվի տվյալ նվիրատուի անունով: Որոշել ենք նաեւ, որ մանկապարտեզի շուրջ հատուկ ցանկապատ կլինի, որի վրա գրված կլինեն մանկապարտեզի աջակցման հարցում բարերարների անունները: Այս ամենը ներկայացվեց ՀՕՄ-ի պատգամավորական ժողովին, որին մասնակցում էին 53

պատգամավորներ՝ 25 երկրներից: Ծրագիրը դրական արձագանք ստացավ, որովհետեւ այն, ինչ արվում է մանուկների համար, չի կարող յուրաքանչյուր հայի սրտից անբաժան լինել: Այսպես, բոլորս աշխարհի տարբեր ուղղություններով լծվեցինք աշխատանքի, որի արդյունքը շոշափելի է այսօր: Ծրագիրը դեռ շարունակվում է, շատ մեծ միջոցառում ունենք անցկացնելու Լոս Անջելեսում, որի հասույթը դարձյալ կուղղվի մանկապարտեզին»:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Երգի ու պարի մարդը



Կան մարդիկ, ովքեր իրենց կյանքն ամբողջությամբ նվիրաբերում են հայրենիքի կերտմանն ու շենացմանը, ովքեր իրենց սեփական օրինակով մարդկության մեջ այդ գաղափարի տարածողն ու արմատավորողն են, որոնց կյանքը պայթյալ է, ինչը ժամանակի ընթացքում վեր է ածվում ապրելակերպի:

Խորհրդային Միության տարիներին, երբ հայը զրկված էր հայոց պատմություն ունեւնասիրելու հնարավորությունից, երբ կարոտ էր ազգային երգին ու պարին, երեւանում ապրող պատանի Կարենն անհամբեր սպասում էր դասերի ավարտին, որպէսզի մեկնի գյուղ՝ պապիկի մոտ, որտեղ նա հնարավորություն կունենա մեկ անգամ եւս լսելու հայի հերոսական հարթանակների եւ հայոց պատմության հերոսական պատմությունները, որտեղ ամեն առավոտ կգարթին՝ ականջին այնքան հաճելի ու կարոտ դարձած «Թիփի, բորան» երգի ներքո: Պատանի Կարենը չէր կարող անգամ պատկերացնել, որ պապիկի սովորեցրած երգերն ու պարերը կդառնան իր կյանքի ուղեկիցը:

Կարեն Մարտիրոսյանը դարձրեց իրեն համատեղ հաճախելի Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը: Երաժշտության նկատմամբ սերը նա ժառանգել էր հորից: Հայրը երաժշտության ուսուցիչ էր եւ 2000 հոգուց բաղկացած երգչախմբի ղեկավար ու դիրիժոր: Կարենը եւ քույրը մեծացել են երաժշտության ու երգի ներքո: Հայրը նվագում էր դաշնամուր, իսկ մայրը՝ երգում գուսանական, աշուղական երգեր: Այդ պատճառով երեխաներին երաժշտական դպրոց հաճախելու որոշումը ծնողները միասին որոշեցին: «Միակ դեմը մենք էինք. մեզ ծեծելով էին ուղարկում երաժշտական դպրոց, պատմում է Կարենը, այնտեղ էլ էր ըմբոստությունս գլուխ բարձրացնում: Սիրում էի միայն հայկական երաժշտությունը նվագել, ինչից դասախոսները բողոքում էին՝ ստելով, որ դասի փոխարեն «ուրիշ բաներ է նվագում»: «Նոր տարվա խնջույքներից մեկում ինձ, ինչպէս միշտ, խնդրեցին երգել: Սովոր էի, որ երգածս երգերը ոչ ոք չգիտեր, բայց այդ օրը ինձ հետ մեկտեղ սեղաններից մեկի մոտ նստած մարդ էր երգում: Կարծես թէ մրցույթի էինք ես ու այդ անձանկը: Ես սկսում էի, ինքը շարունակում էր: Երգելով մոտենում էր ինձ: Պարզվեց՝ այդ մարդը «Շապիանդ» ազգագրական երգի ու պարի խմբի ղեկավարն էր: Նա առաջարկեց ինձ միանալ իր խմբին. ես ընդունեցի նրա առաջարկը, պատմում է, մենք շրջում էինք Հայաստանի շրջաններով եւ պապիկ-տատիկների «երգեցնելով» փնտրում էինք նորանոր երգեր»: «Դպրոցում հատուկ նշանակություն էի տալիս ուսմանը, - ասում է, - բայց դպրոցական առարկաները չսովորեցի ոչ մի նշանակություն չունեղ, որովհետեւ շատ էի կարողուն գեղարվեստական գրականություն եւ սովորում էի հայոց պատմություն: Կարողա՞ ծնողներս ինձ արգելել էին՝ պատճառաբանելով, որ կարող եմ վնասել աչքերս, քանի որ ընթերցանությունս տեւում էր մինչեւ ուշ գիշեր: Հիշում եմ՝ վերմակի տակ, լամպի լույսի ներքո կարդալիս տասնյակ գրքերս»:

Լեհաստանում ծառայությունն ավարտելուց հետո՝ Կարենը, վերադառնալով Երեւան, անդամագրվել է ՀՀԴ շարքերին: «Շանթթանայով Դաշնակցության կանոնադրին՝ հասկացա, որ ճիշտ ճանապարհն էր եւ: Սիրողական բնույթ կրող գործունեությունս ծավալվեց կուսակցականի: Հետագայում եղել եմ Երեւանի ՀՀԴ առաջին կոմիտեի անդամ, - ասում է նա: Կարենն Արցախյան պատերազմում պայմանագրային զինծառայող չի եղել: Լինելով կուսակցական եւ կոմիտեի անդամ՝ 2-3 ամիսը մեկ էր գալիս Ղարաբաղ: Արցախյան պատերազմի ժամանակ նա երգում ու ուրախ ժամանակ էր պարգելում զինվորներին, ինչն օգնում էր ազատվելու լարվածությունից եւ թելուգ մի քանի րոպեով կտրվելու պատերազմի ծանր օրերից: «Կուսակցությունը չէր թողնում, որ Ղարաբաղում երկար մնամ, ասում էին՝ Երեւանում էլ շատ գործ կա անելու: Շուշիի ու Լաչինի ազատագրման ժամանակ ես Երեւանում էի. զանգեցի ընկերներիս եւ կատակով ասացի՝ եթե Բաքուն էլ առանց ինձ գրավվեք, դուրս եմ գալու ՀՀԴ շարքերից», - կատակով պատմում է Կարենը: Կարենը միաժամանակ զբաղված էր կուսակցական գործունեությամբ: Նախաձեռնել էին Դաշնակցության առաջին երիտասարդական բանակումը, ինչը դարձավ առիթ՝ ծանոթանալու ապագա կնոջ՝ Երգիկի հետ: 1998 թվականին Դաշնակցությունը նախաձեռնել էր Դիցմայրի գյուղի վերաբնակեցման ծրագրի առաջին մասնակիցը: Բայց, ցավով, գյուղում չկար դպրոց, եւ երեխաները, դպրոցական տարիքին հասնելով, ստիպված էղան վերադառնալ Երեւան: Կարենը Երեւանում աշխատանքի անցավ Վահան Թորոպեցի անվան միջնակարգ դպրոցում՝ որպէս երաժշտության ուսուցիչ: Միաժամանակ շարունակում էր իր աշխատանքը ազգագրական երգի ու պարի համայնքում եւ համերգային ծրագրերով շրջագայում Արցախի շրջաններով: «Քաջթափի շրջանում շրջագայության ժամանակ հանդիպեցի Բերդորի արվեստի եւ սպորտի դպրոցի տնօրէն Գոռ

Մանուկյանին, ով առաջարկեց ինձ տեղափոխվել եւ երգ ու պար դասավանդել Քաջթափի երեխաներին, - պատմում է, - եւ ընդունեցի նրա առաջարկը՝ չնայած նրան, որ նա թերահավատորեն ընդունեց պատասխանս: 3 ամիս չանցած՝ ընտանիքիս հետ տեղափոխվեցիս Կոփսակաս...»:

Կարենն ու Երգիկեն ունեն 3 զավակ: Որդին իր զինվորական պարտքն է իրականացնում ԼՂՀ ՊԲ-ում: Փոքր դուստրը իր ճակատագրին է հանդիպել Կոփսակասում եւ արդեն ունի մեկ զավակ: Աշխատում է Կոփսակասի միջնակարգ դպրոցում՝ միաժամանակ մանկապարտեզում վարելով երգի եւ պարի խմբակ: Մեծ դուստրը դեռ շարունակում է ուսումը: Երկու աղջիկներն էլ ավարտել են Ալեքսանդր Սպենդիարյանի անվան դպրոցը եւ երկուսն էլ լավ երգում են: Երգիկեն աշխատում է Կոփսակասի դպրոցում՝ որպէս համակարգչային օպերատոր: Կարենն աշխատում է Բերդորի արվեստի դպրոցում եւ կամավորական հիմունքներով ազգագրական երգ ու պար սովորեցնում միջնակարգ եւ մոտավոր երիտասարդներին ու պատանիներին: «Այս գործերում իմ միակ օգնականն իմ կինն է, որի համար շատ շնորհակալ եմ», - ասում է Կարենը: Կարենը Կոփսակասում ունի նաեւ ՀՀԴ պատանեկան եւ երիտասարդական 20 հոգուց բաղկացած խմբեր: «1992 թվականից սկսած՝ հավասար քայլում եմ երիտասարդական միության հետ, եւ այսօր Կոփսակասի երիտասարդականը հաճույքով եմ պահում: Երիտասարդների հետ շփվելով՝ երիտասարդ եմ ինձ զգում: Մի բան, որ շատ ու երկար ես անում, դառնում է քո կյանքի անբաժան մասը», - ասում է Կարենը: Կարենն ու կինը Կոփսակասում ապրում են ծանոթի կողմից ժամանակավոր տրամադրված տանը, եւ հույսով սպասում են, որ մի օր իրենք էլ տուն կունենան իրենց հարազատ դարձած, ազատագրված Կոփսակասում: «Կապ չունի, որ այսօր մեր սեփական տունը չունենք, դա ժամանակի խնդիր է, կարելու է մեր ընտանիքը միասնական եւ մենք երջանիկ ենք», - ասում են ամուսինները:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Հայկական տոներն ու ավանդույթներն Արցախյան ավանդական կենցաղում. ընդհանուր բնութագիր

Մինչեւ 20-րդ դարի 20-ական թթ. արցախցիների ավանդական տոնաձևական համալիրն ուներ այն նույն կառուցվածքը, ինչպիսին հայ ազգագրական մյուս շրջանները:

Հայկական էթնոսի այս խմբի ավանդական կենցաղում առավել տարածված եւ մեծ ժողովրդականություն վայելող տոներն էին՝ Նոր Տարին (Ամանոր, Կաղանղ), Զրիստոսի Ծնունդը (Սուրբ Ծնունդ), Սուրբ Սարգիսը (Առաջավորաց պահք), Վարդանանցը, Տեառնընդառաջը (Դըռքօռունջ, Դռքօռաջ, Դօնդօռունջ), Բարեկենդանը, Մեծ Պասքը, Ծաղկագարդը, Համբարձումը, ՎարդաՎառը (Վարդելվոր, Վրդեվոր, Վըրթեվոր, Վըրթեվոր), Սուրբ Աստվածածնի Վերափոխումը (Խաղճօրհներ), Խաչվերացը (Աբխեչ), եւ հատկապէս՝ Նավասարդը:

Հայկական քրիստոնեական տոնական համակարգի հիմքը հանդիսացող վերոնշյալ տոները ծագումնաբանորեն ունեն հեթանոսական ակունքներ, որոնք բաղկացած են տնտեսական, ընտանիքի եւ անհատի ճակատագրին ու բախտը կանխագուշակող հմայական բնույթ ունեցող ծեսերով, հավատալիքներով ու սովորույթներով, որոնցում մասնավորապէս արտացոլվել է երկրագործական-ժողովրդական տոնացույցը, որը ընդհանուր հայկական մշակույթի համակարգում բնորոշ էր նաեւ արցախցիների ավանդական տոնական ու ծի

սական համալիրին: Ավանդական տոների շարքում Նավասարդի կենցաղավարումը որոշակի առավելություն ուներ Ամանորի նկատմամբ (հունվարի 1): Վերջինս հիմնականում մեծ տարածում ուներ Արցախի քաղաքային բնակավայրերում: Սակայն գյուղ ներթափանցող քաղաքային ավանդույթներն ու սովորույթները թուլացրել էին ավանդական Նավասարդի հիմքերը, թեպետ վերջինիս փոխարեն դեռեւս կենցաղ էր ներթափանցել հունվարյան Նոր Տարին: Արցախում Նավասարդը տոնվում էր ոչ թէ օգոստոսին, այլ՝ նոյեմբերին, որը մատնանշում էր տնտեսական տարվա ավարտը: Ուշադրամբ երեւոյթ էր նաեւ Վարդավառի տոնաձևական համալիրում Համբարձման-վիճակի եւ մասամբ՝ Նուրիկի առկայությունը՝ չնայած այն հանգամանքին, որ դրանցից յուրաքանչյուրն ավանդական կենցաղում դեռեւս պահպանում էր արարողակարգային դիմագիծը: Սակայն Հայաստանում կային այլ ազգագրական շրջաններ եւս, որոնցում Վարդավառին գրեթէ կրկնվում էին Համբարձման տոնին յուրահատուկ վիճակախաղերը: Տավուշում, Համշենում, Պոնտական տարածաշրջանի որոշ բնակավայրերում Վարդավառը նույնպէս հանդիսանում էր վիճակ-բախտ բացելու օր, որը տարբեր ժամանակաշրջաններում ավելի մեծ հանդիսավորու

թյամբ էր նշվում, քան բուն Համբարձման տոնը: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի որոշ բնակավայրերում Վարդավառին խարույկներ էին նաեւ վառում: Երեւոյթ, որը յուրահատուկ է Տյառնընդառաջին: Արցախյան ավանդական ծիսական Նուրիկը («Գողի», «Ճուլի»), իրագործվում էր վնասաբեր տեղումները կանխարգելելու նպատակով: Հատկապէս խորհրդային վարչակարգի ժամանակաշրջանում ազգային տոների ավանդույթների եւ ծիսական արարողությունների հիմնական կրողն ու պահպանողը հանդիսանում էր կինը: Այդ առիթով իր «Ուղեգրություններ, հուշեր» աշխատության 8-րդ հատորում պատմաբան Լենն գրում է. «Հայ կինը ընտանեկան կյանքի մեջ ներկայանում է ինչպէս մի առանձին մարմին, որը պահպանում է ընտանեկան բարքերն ու սովորույթներն ամենայն սրբությամբ եւ միշտ հարազատ է մնացել հայության լեզվին եւ բոլորովին պահպանել հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության...»: 20-րդ դարի 20-ական թթ. արցախցիների ավանդական կենցաղում տոների ու ավանդույթների անկումը մասնավորապէս պայմանավորված էր այն հանգամանքով, որ խորհրդային իշխանությունները որդեգ

րել էին հակակրոնական քաղաքականություն: Հայկական էթնիկ ինքնությունը բնութագրող էթնոմշակութային այս կարեւոր մասնիկի անկման գործընթացն ավելի խորացավ այն պատճառով, որ խորհրդային նորարարական քաղաքական վերնախավն աջակցում էր արդիւնատարական իշխանությունների կողմից իրականացվող բացահայտ հակահայկական քաղաքականությանը: Վերոնշյալի վառ ապացույց է հանդիսանում արդիւնատարական կրոնական տոների նկատմամբ հանդուրժողական քաղաքականությունը: Այս քաղաքականության արդյունքում՝ 20-րդ դարի վերջերին տեղաբնիկ հայկական էթնոսի ազգային-ավանդական տոներն ու ծեսերը փոխարինվեցին խորհրդային ապագային տոներին:

Արցախցիների հարատեւումը, ազգային մշակույթի, այդ թվում նաեւ՝ ավանդական տոների պահպանումն ու սերունդներին փոխանցումը հնարավոր է միայն անկախ պետականության պայմաններում: Անկախ հայկական պետականության վերականգնումը պատմական հայրենիքի մի մասի վրա կարելուր նախադրյալ հանդիպեցնող հայկական ավանդական տոների վերականգնման համար: Եվ հայ ժողովուրդը վերստին սկսեց նշել նախնայաց տոներն ու ավանդույթները:

Հովիկ ԱՎԱՆԵՍՍՈՎ

Վրիժառու բազուկը - Միսաք Թռուլարյան

Հայկական ցեղասպանությունները կազմակերպող եւ իրականացնող երիտթուրք պարագլուխներին պատժելու նպատակով ԶՅԴ-ի կողմից 1919թ. հոկտեմբերին ստեղծված Պատասխանատու մարմին՝ Շահան Նաթալու գլխավորած «Նեմեսիս» սեւ ցուցակում տեղ գտան նաեւ մուսավաթական Ադրբեջանի պանթոնը՝ իր սպանված բազուկների անունները՝ Ադաեւ, Թովհիբբաշեւ, Հուսեյնզադեւ, Խոյսիկ, Ջիվանշիր, Դասիմբեկով...:

Պատասխանատու մարմնին անդամագրվել էին ամենաքաջ, ամենահանդուգն հայորդիները (Սողոմոն Թեխլիրյան, Արշակունի Կիրակոսյան, Արամ Երկանյան, Միսաք Թռուլարյան...), որոնք էլ սկսեցին ի կատար անել Հայոց ցեղասպանությունը կազմակերպող եւ իրականացնող թուրք եւ ադրբեջանցի (թաթար) ուղղորդների նկատմամբ որոշված արդարահատուց գործողությունները: Մուսավաթիստ ուղղորդներին վերացնելու առաջնությունը պատկանում է կարինցի Արամ Երկանյանին (1900-1934): 1919թ. հոկտեմբերին Թիֆլիսի Երեւանյան հրապարակում նա գնդակահարեց Ադրբեջանի ռազմական նախարար Դասիմբեկովին, այնուհետեւ գնդապետ Սարաֆովին, իսկ 1920թ. հունիսի 19-ին՝ Բաքվի եւ Շուշիի հայկական կոտորածների կազմակերպիչ, Ադրբեջանի վարչապետ Խոյսիկուն, նրա գործակից Մահմեդովին եւ նրանց թիկնապահին:

Երբ Սողոմոն Թեխլիրյանը 1921թ. մարտի 15-ին Բեռլինում գնդակահարեց ամենամեծ ուղղորդին՝ Թալեաթին, Պատասխանատու մարմինը հանձնարարեց «Նեմեսիս» գործողության մասնակիցներին արագացնել արդարահատուց գործողությունները մյուս ուղղորդների նկատմամբ:

1921թ. Կ.Պոլիսը գտնվում էր դաշակից պետություններ Ֆրանսիայի եւ Անգլիայի հսկողության ներքո, եւ «Մուսավաթի» պարագլուխները ազատ էլումնուտ էին անում՝ որպէս Ադրբեջանը ներկայացնող տարբեր պաշտոնյաներ: Նրանք նկատմամբ արդարահատուց գործողություն կատարելու համար Պատասխանատու մարմինը հանձնարարել էր տրապիզոնից Միսաք Թռուլարյանին եւ իր ընկերներին:

Այդ օրերին Կ.Պոլիսում էր գտնվում պանիսլավոֆիկ հայտնի գաղափարախոս եւ հայկական շարժումը գովաբանող ու խրախուսող Ահմեդ Աղաեւը: Հայ վրիժառուները նրան հետապնդում էին, երբ լուր են ստանում, թէ Կ. Պոլիս է ժամանել նաեւ Ադրբեջանի Թալեաթը՝ Բեհբուջի խան Ջիվանշիրը: Նրա՝ Կ. Պոլիս գալով առժամանակ մոռացվեց Աղաեւը:

1921թ. հունիսին Բեհբուջի խան Ջիվանշիրը ժամանել էր Կ.Պոլիս՝ իբրեւ բոլշեւիկյան Ռուսաստանի առեւտրական ներկայացուցիչ: Թերեւս այդ պատրվակով էր Բաքվից մեկնել հայ ազգաբնակչությունից թալեաթի հարստությունը՝ դուրս հանելու համար: Կ. Պոլիսում նրան առաջինը տեսել էր Աբրահամ Գյուլխանյանը (ԶՅԴ-ի նշանավոր գործիչ), որը դեռեւս Բաքվից անձամբ էր ճանաչում Ջիվանշիրին:

Այս լուրը ստանալուն պէս սկսվեց նրա հետապնդումը: Գործը հանձնարարվեց թուրքերի դեմ մղած մարտերի բովոլ անցած տրապիզոնցի երեք երիտասարդների՝ Երվանդ Ֆուհրադյանին, Հարություն Հարությունյանին, Միսաք Թռուլարյանին: Առաջին երկուսը պետք է կատարեին միայն հետապնդումը, իսկ հարվածը հասցնել Միսաք Թռուլարյանը: Սկզբնական շրջանում հետապնդմանը մասնակցել է նաեւ Հրաչ Փափազյանը: Շուտով հայտնաբերվել է, որ ուղղորդը բնակվում է «Բերա Փալաս» շքեղ հյուրանոցում: Իր տրամադրության տակ ուներ երկու ինքնաշարժ: Հետապնդումները ցույց տվեցին, որ Ջիվանշիրը չունի հյուրանոցից դուրս ու ներս անելու որոշակի ժամեր: Նա հյուրանոցից դուրս էր գալիս շտապելով, նստում ինքնաշարժը եւ հեռանում: Դա էր պատճառը, որ դժվար էր առանձին գտնել եւ հարմար պահին խփել: Նրա Կ. Պոլիս ժամանելուց անցել էր արդեն մեկ շաբաթ, սակայն որեւէ ար-

տառոց բան տեղի չէր ունեցել: Հուլիսի 18-ի երեկոյան նրան սպասարկող երկու ինքնաշարժն էլ կանգ առան հյուրանոցի դռան առջեւ: Նրանցից դուրս եկան Ջիվանշիրը, էլի մի քանի հոգի եւ մտան հյուրանոց: Քիչ անց բոլորը միասին դուրս եկան հյուրանոցից եւ մտան մոտակա «Փղթի Շանի» պարտեզը, ուր բացօթյա թատրոն կար, եւ տեղ զբաղեցրին բուֆետի մոտ՝ պատվիրելով խորտիկներ: Արդարահատուց գործողության հարմար պահը եկել էր, ուստի Հարությունը շտապեց հեռանալ: Միսաքը եւ Երվանդը այդ պահին նույնպես մտան պարտեզ, որը լի էր բազմությամբ: Շարժվելը դժվար էր, ուստի հնարավոր չէր գալ առաջանալ եւ ուղղորդին խփել նստած տեղը: Վրիժառու ստիպված էր սպասել մուտքի դռան մոտ, մինչեւ նրանց դուրս գալը: Երկար սպասելուց հետո մարդկանց բազմությունը սկսեց խառնախուռն ելնել պարտեզից...

«Ջիվանշիրը դուրս եկավ եւ անցավ մեր առջեւից, - հիշում է Միսաք Թռուլարյանը: Ամբոխի խմբավազության պատճառով չկարողացա հասնել եւ զարկել, կլինեին անմեղ գոհեր: Նա գնում էր դեպի հյուրանոց: Ճանապարհի երկու կողմերում բազմաթիվ ինքնաշարժներ էին կանգնած: Մտածեցի, որ մարդկանց բազմության միջոցով չպիտի կարողանամ հասնել նրան, ուստի ինքնաշարժների միջեւ գտնվող մեկ ոտնաչափ ճանապարհով արագ-արագ մտոցեց: Երբ մոտեցում էի, նկատեցի, որ գլուխը շրջեց եւ սկսեց շուրջը նայել, ապա նորից շարունակեց ճանապարհը: Կասկածեցի, որ կարող է խուսափել եւ հեռանալ, ուստի արագ կարողացա հասնել ու, մինչ կմտնեք հյուրանոց, քաշեցի ատրճանակս եւ փոխանակ խփեի գլխին, փողը դեմ տվեցի կողքին եւ կրակեցի: Ուրիշ կերպ չկարողացա. ինքը բարձրահասակ էր, եւ՝ կարճ, հետեւ ինքնաշարժ կար, կողքը՝ բազմություն, ազատ շարժվելու հնարավորություն չունեի: Առաջին հարվածից չընկավ, ընդհակառակը, ուղղվեց եւ կարողացավ երկու ձեռքերս ամուր բռնել: Ձեռքերս բռնելը շատ լավ եղավ ինձ համար, որովհետեւ դարձավ դեմքով դեպի ինձ, կուրծքը առաջ: Այս անգամ երկու գնդակ արձակեցի ուղղակի կրծքին, եւ նա վայր ընկավ:

Ժողովուրդը այդ պահին խուճապի մատնվեց. յուրաքանչյուր ոք փորձում էր մի տեղ գտնել մտնելու, թաքնվել ինքնաշարժների կողքը, որպեսզի գնդակ չզիպչի: Ընկերս՝ Երվանդ Ֆուհրադյանը, առաջին կրակոցից հետո արդեն մեկնել էր՝ ավարտած համարելով իր գործը: Ինձ համար ճամփա բացվեց, եւ եւս ազատ սկսեցի քայլել դեպի «Բերա Փալաս» հյուրանոցի անկյունի փողոցը, որտեղից առաջ գնալով՝ կարող էի մտնել թուրքական հին գերեզմանոց եւ անհետանալ: Փողոցի անկյունում կանգնած էին երկու թուրք ստիկան, որոնք անմիջապես փախան, երբ ձեռքս ատրճանակ տեսան:

Այդ պահին ականջիս հասավ Ջիվանշիրի ձայնը, որը բղավում էր օգնության եր կանչում: Գիշերվա ժամը մեկի մոտ էր: Մեքս կասկած առաջացավ, որ մեռած չէ, վերադառնամ, որ վերջացնեմ: Հետ դարձա դեպի ուղղորդը: Երբ մոտեցա, շուրջը հավաքվել էին մոտ 20-30 մարդ: Ատրճանակը ձեռքիս տեսնելով՝ բոլորն էլ հետ քաշվեցին: Մոտեցա եւ գետնին փռված Ջիվանշիրի գլխին գնդակ տվեցի: Մեկ գնդակ էլ պարպեցի կրծքին, ապա նայեցի շուրջս եւ տեսա 4-5 ստիկան՝ ատրճանակը ձեռքերին, որոնք կրակել էին փողոցի այն անկյունը, որտեղից կարող էի փախուստ տալ: Այդ ճանապարհով ազատվելու անհնար էր, ուստի կտրեցի փողոցը եւ փորձեցի անցնել դեպի Բերա: Ինքնաշարժները խիտ առ խիտ շարված էին «Բերա Փալասի» մոտից մինչեւ «Փղթի Շան»: Սրանց արանքում նկատեցի մի բաց ինքնաշարժ, որի մեջ պռնկված էին մարդիկ: Երբ այդ ինքնաշարժի վրայով թառ, որ անցնեմ մյուս կողմը, ընկա պռնկված մարդկանց վրա, եւ տակավին ոտքերս գետնին չհասած՝ չորս հոգի ինձ բռնեցին: Բռնողներից մեկը Ջիվանշիրի եղբայրն էր՝ Ջուհուրը, որը ամուր բռնեց մեջքս: Մի գնդակ

պարպեցի նրա վրա, որը աչքի վերի ոսկորները փշրեց եւ անցավ, սակայն նա չընկավ, թեեւ արյունվա էր, մեքս բաց չթողեց: Եթե բաց թողնեմ ինչ, մյուս երեքին էլ կատակացնեի, քանի որ ատրճանակիս մեջ մնացել էր չորս փամփուռ: Ատրճանակս լիցքավորելու հնարավորություն այլեւս չունեի, ուստի հաշտվեցի հանձնվելու գաղափարին: Թեքվեցի, բազուկս դրի ինքնաշարժի կողքին, օդ կրակեցի եւ սպառեցի: Այդ պահին մի թուրք ստիկան մոտեցավ, բռնեց ձախ ձեռքս եւ ուզում էր ատրճանակս խլել, սասցի:

- Չփորձես, այլապես շանսատակ կանես... Այսպես լարված մնացել էինք, երբ հասան ֆրանսիացի ստիկանները եւ վերցրին ատրճանակս: Դրանից հետո սկսվեց ծեծը... Ինձ քարշ տվեցին մինչեւ ստիկանատուն, որտեղ շարունակվեց ծեծը: Երբ ինձ հասցրեցին ստիկանապետի սենյակը, վրաս գրեթե հագուստ չէր մնացել: Թուրք ստիկանապետը շքամբ նստեց եւր ներք ինձ, մերթ ստիկաններիս: Երբ ֆրանսիացի ստիկանը բարձրացրեց ձեռքի մահակը, որ հարվածի գլխիս, բռնեց նրա ձեռքը եւ սասց:

- Սա իմ պաշտոնատեղն է, այստեղ դուք իրավունք չունեք մարդ ծեծելու... Սպանվող թուրք է, սպանողն էլ հայ, հավանաբար նրանք մեր հպատակներն են, մի՞ խառնվեք այս գործին: Այլեւս ծեծը դադարեց:

Ինձ բանտ տարան: Հաջորդ օրը հարցաքննությունը սկսվեց թարգմանչի միջոցով, որը տեղեց մոտ ինչպե՞ս ժամ: Հարցրեցին ամեն ինչի մասին, սկսած մանկության օրերից, մինչեւ դեպի օրը: «Թե ինչու սպանեցի Ջիվանշիրին» հարցին պատասխանեցի, որ այդ մարդը ամբողջ ընտանիքս ջարդել է տվել Բաքվում, եւ երբ հանդիպեցի իրեն, չկարողացա ինքս ինձ գապել եւ սպանեցի... Այնուհետեւ ինձ տարան բանտախոց:

Երբ ստիկանները հարցաքննության արձանագրությունները հանձնեցին անգլիացի բանտապետին, վերջինս դրանք վերցրեց, պատռեց եւ մի հայոյանք էլ տալով ֆրանսիացի քննիչների հասցեին՝ չպորտեց...

Այն բանտասենյակը, որտեղ ինձ տարան, կային մի քանի բանտարկյալ՝ ազգությամբ հրեա, հույն, արաբ, մակեդոնացի, ռուս, որոնք բոլորն էլ մեղադրվում էին մարդասպանության մեջ: Ահա սրանք էին իմ ընկերները անգլիացի բանտի մեջ: Առաջին օրվանից բանտարկյալների հետ բարեկամություն հաստատեցի այնքան, որ դրսից ուղարկվող ուտելիքներից ինձ էլ էին բաժին հանում եւ ազատել էին ինձ բանտասենյակը մաքրելու տիպի պարտականությունից:

Բանտապահների գլխավորը հայ էր՝ Բարսեղ անունով, որի միջոցով կարողացա լուր ուղարկել ընկերներին, որոնք ինձ այցելության եկան: Բարսեղի օգնությամբ կարող էի բանտից փախչել եւ ազատվել, սակայն գիտեի, որ դատավարությունը իմ օգտին է լինելու, այդ պատճառով էլ հրաժարվեցի փախչելու մտքից...

Շուտով պետք է սկսվեք դատավարությունը, որից մեկ օր առաջ ինձ տարան մի առանձին սենյակ, ուր դեմս հանեցին Ջիվանշիրի եղբորը՝ Ջուհուրին, որը վկայեց, որ իր եղբոր սպանողն էս էի: Այնուհետեւ սենյակ բերեցին Ջիվանշիրի ռուս կնոջը, որը ինձ տեսնելուն պես իբր թե ուշաթափվեց: Երբ սթափվեց, ինքն էլ հաստատեց, որ սպանողը ես էի: Իսկ ես չուրացա, որ ես եմ սպանել»:

Դատավարությունը սկսվեց Կ. Պոլիսի Հարպիեի Նախկին զինվորական դատարանի դահլիճում: Դատական ատյանի նախագահը եւ նրա երկու օգնականները անգլիացիներ էին: Առաջին վկան Ջիվանշիրի եղբայրն էր՝ Ջուհուրը, որը հաստատեց, որ սպանողը ամբաստանյալն է, որը հրազենով իր աչքն էլ է վնասել, երբ ինքը բռնում էր նրան: Երկրորդ վկան Ջիվանշիրի կինն էր, որն սասց, թե իր ամուսինը առհասարակ խառնված չէ հայկական կոտորածներին...

րին... Մեղադրող կողմից հանդես եկան եւս մի քանի հոգի, որից հետո հարցաքննության կանչվեցին պաշտպանական կողմի վկաները (այդ թվում՝ Երվանդ Օռյանը), որոնք մանրամասն պատմեցին 1918թ. սեպտեմբերին Բաքվում թուրքերի եւ թաթարների՝ հայերի դեմ սարքած կոտորածների մասին, որոնք կազմակերպիչներն էին Ջիվանշիրը, խան Խոյսիկն եւ ուրիշներ: Այդ կոտորածների ժամանակ սպանվեցին ավելի քան 30000 հայեր: Դատավարությունն ունեցավ 40 նիստ եւ տեղեց ավելի քան երկու ամիս: Բոլոր վկաներին հարցաքննելուց հետո դատախազը հրավիրեց Նյարդային հիվանդությունների երկու բժշկի, մեկը՝ թուրք, մյուսն՝ անգլիացի: Թուրք բժիշկ Օսման բեյը հայտնեց, թե ինքը քննել է ամբաստանյալին, եւ գտնում է, որ ոչ սպանություն գործած օրը եւ ոչ էլ բժշկական քննության ենթարկված օրը ամբաստանյալը մտային խանգարում չի ունեցել, լուսնոտ էլ չէ, հետեւաբար՝ պատասխանատու է իր գործած հանցանքի համար: Մրան հակառակ՝ անգլիացի բժիշկը հայտնեց, թե երեւ լուսնոտ է ամբաստանյալին, մարմնի վրա գտել է սպիներ, նկատել է սրտային նոպաներ, արյան անկանոն շրջանառություն... Փաստեր կան, որ ինքը եղել է լուսնոտ, որի նոպայի ընթացքում առաջացող հուզմունքը կարող էր նրան մղել կատարելու ոճիր, որի համար ինքը պատասխանատու չէ: Պետք է հատկապես նշել, որ Մ. Թռուլարյանի փաստաբան Հմայակ Խոսրովյանը դատապաշտպանությունը կազմակերպել էր՝ հիմնվելով երեք գլխավոր փաստերի վրա:

Առաջին. որ Բաքվի հայ ազգաբնակչության ջարդերի գլխավոր պատասխանատուն եղել է Ջիվանշիրը:

Երկրորդ. որ Թռուլարյանը սպանությունը կատարելու պահին եղել է մտային խանգարման վիճակում:

Շրորդ. որ իր հարազատները կոտորվել են Բաքվում:

Ինչպես երևում է շարադրվածից՝ փաստաբան Վ. Խոսրովյանը նպատակահարմար է գտել պաշտպանությունը տանել նույն ձեռով, ինչպես տեղի էր ունեցել Բեռլինում Սողոմոն Թեխլիրյանի դատավարության ժամանակ, երբ դատարանը վերջինիս անմեղ էր ճանաչել: Դատավիճակը հայտարարելու օրը դատարանի շենքի շուրջը հոծ բազմություն էր հավաքվել: Հավանաբար վախենալով, որ դրսում կարող է խառնակություն ծագել, դատավորը հայտնեց, թե դատավարության թղթածրարն ուղարկվելու է Լոնդոն, որտեղից պետք է ստացվի դատավիճակը: Երկու շաբաթ անց՝ 1921թ. հոկտեմբերի 6-ին ստացվեց դատավիճակը, որում գրված էր.

«Ամբաստանյալը հանցավոր է սպանության համար, սակայն ատյանը գտնում է, որ նա պատասխանատվություն չի կրում իր գործած հանցանքի համար, քանի որ այն կատարելու պահին ունեցել է մտային խանգարում»:

Միսաք Թռուլարյանն ազատ է արձակվել, բայց աքսորվել է Յունաստան: Յունաստանից նա անցել է Ռումինիա, որտեղ մնացել է մինչեւ 1941թ.:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Մ. Թռուլարյանը Դրոյի հետ բազմաթիվ հայերի է փրկել գերությունից: Պատերազմի ավարտից հետո հայտնվում է Շտուտգարտում եւ այնտեղ մնում մինչեւ 1951թ.: Այնուհետեւ մեկնում է ԱՄՆ, որտեղ էլ մահանում է 1968 թվականին:

Արա ՆԱԽՇՈՒՐՅԱՆ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀՀ-ի Արցախի կառույցն իր խորին վշտակցությունն է հայտնում ՀՀ-ի Ստեփանակերտի «Արթուր Ակրոսյան» կոմիտեի ներկայացուցիչ Կամ Բարսեղյանին, նրա ընտանիքին ու հարազատներին՝ սիրելի մոր՝ Թամար Գրիգորյանի մահվան առիթով:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ Ստեփանակերտ, Կոմունյանց 17, հեռ. 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԿԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ